ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

26.11.2014թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77[1]-77[6] հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2014 թվականի մարտի 6-ի N 73-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի առաջատար մասնագետ Լիլիթ Քոչարյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Քարաբերդ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների և հողօգտագործման ոլորտներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Քարաբերդ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Լիլիթ Քոչարյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Համայնքի ղեկավար՝
Յուրիկ Շավելյան _____